ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -278-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «06» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Ա. Կարապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական փառատոն») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական 10-րդ փառատոնի իրականացումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձի միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանվա պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքու դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել

ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 20000.0 հազար (քսան միլիոն) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. հուլիսի 10-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարություն	«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Իսահակյան 28
Կառավարական տուն 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 900018001678 ՀՎՀՀ 02514349
Հ/Հ 900011032878 ՀՎՀՀ 02698732	Հեռ՝ 055/ 991919
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Հ. Հակոբյան	Ա. Կարապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«23» «06» 2023 թ.
N ՄՇԴ-278-2023 պայմանագրի

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական 10-րդ փառատոնի իրականացման

1	Կազմակերպության անվանում	«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28
3	Ծրագրի անվանում	«Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային 10-րդ փառատոն
3.1	Բովանդակություն	2023 թ-ի հունիսի 23-ից հուլիսի 9-ը Հայաստանում կիրականացվի «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական 10-րդ փառատոնը: Քննարկումների վրա շեշտը դնող փառատոներ անցկացվում են շատ երկրներում (ԱՄՆ, Իտալիա, Ռուսաստան, Լեհաստան և այլն): «Ֆրեսկո»-ն խտացրել է այս ոլորտում միջազգային հաջող փորձն ու հայաստանյան փառատոների լավագույն առանձնահատկությունները՝ ներկայանալով մեր երկրում իր տեսակի մեջ եզակի մոտեցումներով: «Ֆրեսկո» փառատոնը երկխոսության առիթ է, որը Հայաստանը դարձնում է արդիական շփումների խաչմերուկ: Բացօթյա ցուցադրություններն ու «առանց տոմսի» միջոցառումները օրեր շարունակ կդառնան հայաստանցիների և զբոսաշրջիկների առօրյայի անբաժան մասը: ՀՀ Արմավիրի և Լոռու մարզում տեղի կունենան ֆիլմերի դիտում-քննարկումներ, համերգային ծրագրեր, միջազգային փառատոնային օրեր, մարզային ներառական մշակութային ճամբար: Փառատոնի նախատեսվող միջոցառումներն են. • Կինոդիտումներ և քննարկումներ • Համերգային ծրագրեր • Վարպետության դասեր • Միջազգային փառատոնային օրեր • Ներառական ճամբար ք. Վանաձորում

		Փառատոնի շրջանակներում կցուցադրվեն 30-ից ավելի միջազգային ֆիլմեր Հայաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, ԱՄՆ-ից, Պարսկաստանից, Իսպանիայից, Իտալիայից, Լեհաստանից և այլ երկրներից (խաղարկային, անիմացիոն, լիամետրաժ, կարճամետրաժ, դեբյուտային): Դրանք բոլորը աշխատանքներ են, որոնք մերժում են պատերազմները, էկոլոգիական աղետները, բռնությունը, քարոզում՝ խաղաղություն, մարդասիրություն, հայրենասիրություն, անդրադառնում են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին, ներկայացնում են նրանց կարողությունները, արարելու և աշխատելու ներուժը և իրավունքները: Փառատոնի ծրագրում կլինեն նաև «Միջազգային փառատոնային օրեր», որի շրջանակում հյուրերը կներկայացնեն իրենց փառատոների լավագույն նմուշները, կպատմեն իրենց փառատոների մասին, ինչը հնարավորություն կտա հայաստանյան կինոարտադրողին դիմելու և համագործակցելու: Ֆրեսկոն այս տարի կհյուրընկալի նաև անվանի արվեստագետների, մտավորականների, հոգևորականների, որոնց թվում՝ կինոռեժիսոր, Վատիկանում գործող Մշակույթի հայրապետական հանձնաժողովի անդամ Քշիշտոֆ Զանուսսին (Լեհաստան), «Հաշմանդամների համառուսաստանյան և միացյալ կազմակերպությունների միություն AbiArt» հասարակական ասոցիացիայի նախագահ Նատալյա Կրելը (Ռուսաստան), մի շարք կինոփառատոների էկումենիկ ժյուրիի անդամ (Բրատիսլավա, Կանն, Ֆրիբուրգ, Վարշավա և այլ) Հայր Մարեք Լիսը (Լեհաստան) և այլք: Փառատոնն առանձնակի նշանակություն է տալիս սոցիալական հատուկ խմբերի հետ աշխատանքներին՝ հատկապես խոցելի խմբի երեխաների և երիտասարդների հետ: Ոլորտում մասնագիտացված կառույցների հետ համագործակցության շնորհիվ նրանք ոչ միայն մասնակցում են բոլոր միջոցառումներին, այլ նաև ակտիվորեն ներգրավվում են փառատոնի կազմակերպչական աշխատանքներում: 2023թ.-ի Ֆրեսկո փառատոնի ծրագրում կներգրավվեն խոցելի խմբի երեխաները, մանկավարժները, ծնողները և աշխատակազմը՝ 130 անձ, ովքեր կմասնակցեն Վանաձորում մշակութային ներառական ճամբարին:
3.2	Նպատակ	«Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական փառատոնի նպատակներն են՝ • Մշակութային երկխոսության միջոցով հանրության մեջ սիրո, համերաշխության և մարդասիրական արժեքների

		տարածումը • Բարոյախրատական ֆիլմերի ստեղծումն ու զարգացման խթանումը և դրանց նկատմամբ հանրային պահանջարկի ավելացումը՝ որպես սոցիալ և մշակութային կարևոր գործոն • Մշակութային գործիչների շփումների ակտիվացումը և փոխշահավետ համագործակցության դաշտի ստեղծումը, մասնագիտական փորձի փոխանակումը հայաստանյան, սփյուռքի և արտերկրյա արվեստագետների միջև • Խոցելի խմբերի կարողությունների, արարելու և աշխատելու ներուժի բացահայտումը, կարծրատիպերի կոտրումը • Ստեղծագործական միասնական աշխատանքների խթանումը՝ ինտեգրման սկզբունքով
3.3	Անցկացման ժամկետ	2023թ. -ի հունիսի 23 –ից հուլիսի 9–ը
3.4	Անցկացման վայր	ՀՀ Լոռու մարզ, Արմավիրի մարզ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ծրագրի իրականացմամբ կձևավորվի մշակութային այնպիսի միջավայր, որտեղ կգործի կինոսիրող և մասնագետ ուղիղ կապը, կլինեն բազմաթիվ սոցիալական, հոգևոր և բարոյական հարցերի քննարկումներ, որտեղ երիտասարդները կստանան իրենց հարցերի պատասխանները՝ տվյալ թեմային տիրապետող մասնագետներից, ինչը կնպաստի ազգային արժեքների և հայրենիքի հանդեպ նվիրվածության գիտակցմանը, գեղագիտական ճաշակի զարգացմանը: Բացի այդ՝ կստեղծվի հարթակ հայաստանցի և արտասահմանյան մասնագետների ծանոթության, տվյալների, փորձի փոխանակման համար, մասնակիցները կծանոթանան հայկական և արտասահմանյան մշակույթներին, ձեռք կբերեն նոր գիտելիքներ, որոնց շնորհիվ հայաստանցի արվեստագետները հնարավորություն կստանան մասնակցելու արտերկրյա փառատոներին, միջոցառումներին, ինչպես նաև իրենց ստացած գիտելիքները հետագայում կկիրառեն իրենց համայնքներում: Ոչ ֆորմալ կրթության կոմպոնենտների շնորհիվ մասնակիցներն ավելի հասանելի և հեշտ յուրացրած կլինեն ներառական գիտելիքները և առանձնահատկությունները: Խոցելի խմբերը ձեռք կբերեն ինքնավստահություն, կզգան իրենց որպես հասարակության լիարժեք անդամ: Հաշմանդամություն չունեցող անձինք ձեռք կբերեն հավասարության, արդարության

		զգացում, կդառնան հոգատար և պատրաստակամ միմյանց օգնելու:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	30 Ֆիլմերի ցուցադրություն 3000 անձ հանդիսատես 130 անձ հայաստանյան մասնակիցներ 8 անձ օտարերկրյա արվեստագետ 130 անձ ճամբարի մասնակից 30 անձ կամավորներ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարություն
ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001678, ՀՎՀՀ 02514349
Հեռ՝ /055/ 991919
Տնօրեն՝
Ա. Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«23» «06» 2023 թ.
N ՄՇԴ-27/2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային ներառական 10-րդ փառատոնի կազմակերպման

	Ծախսատեսակների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը, (հազար դրամ)
1.	**Աշխատանքի վարձատրություն (ներառյալ հարկերը)*, այդ թվում՝**				**570,0**
1.1	ծրագրի ղեկավար	մարդ	1	200 000	200,0
1.2	համակարգող	մարդ	1	80 000	80,0
1.3	ֆինանսական համակարգող	մարդ	1	170 000	170,0
1.4	գնումների համակարգող	մարդ	1	120 000	120,0
2.	**Տպագրական և գովազդային ծառայություններ, այդ թվում՝**				**1 129,9**
2.1	Գովազդային վահանակների տպագրություն՝ պաստառ՝ 2 հատ x 18 մ x2 մ = 72 ք.մ պաստառ բեմի ձևավորան համար՝ 81 ք.մ. (առաջնամաս՝ 34 քմ, ետնամաս՝ 3,5 մ x 5 մ x 2 հատ=35 քմ և մx4 մ x 2 հատ = 12 ք.մ.) 153 ք.մ. x 2500 դրամ = 382 500 դրամ 1,5	հատ	1	382 500	382,5
2.2	տարբեր երկրների դրոշներ՝ 15 հատ x 12000 դրամ = 180 000 դրամ	հատ	1	180 000	180,0
2.3	շապիկներ հատուկ դիզայնով և տպագրված՝ 100 հատ x 3800 դրամ = 380 000 դրամ	հատ	1	380 000	380,0
2.4	բեյջ՝ 200 հատ x 600 դրամ = 120 000 դրամ	հատ	1	120 000	120,0
2.5	դիպլոմներ՝ 60 հատ x 700 դրամ = 42 000 դրամ	հատ	1	42 000	42,0
2.6	հրավիրատոմսեր՝ 203 հատ x 125 դրամ = 25 375 դրամ	հատ	1	25 375	25,4
3.	**Հանրահռչակման ծառայություններ, այդ թվում՝**				**470,0**
3.1	ոճի մշակում՝ տարբերանշան, կայք, սոց ցանցեր, գովազդային, տպագրական նյութեր, (պաստառների, շապիկների, հրավիրատոմսերի, բեյջերի, դիպլոմների)	հատ	1	250 000	250,0
3.2	էլեկտրոնային մարքեթինգի ապահովում՝ թվային հարթակներում գովազդային հոլովակների տարածում: SMM (Social Media Management) սոցիալական կայքերի, էջերի վարում և գովազդ	հատ	1	220 000	220,0
4.	**Կազմակերպչական ծառայություններ, այդ թվում՝**				**14 496,8**
4.1	Փառատոնի վիդեո և ֆոտո լուսանկարահանում՝ (անօդաչու սարքի օգտագործում), լուսանկարների մշակում՝ 8 օր x 80000 դրամ = 640000 դրամ	հատ	1	640 000	640,0
4.2	LED էկրան՝ 8 օր, (Absen LED էկրան, 2,9 P խտությամբ՝ 20 ք.մ.)՝ 8 օր x 320 000 դրամ = 2 560 000 դրամ	հատ	1	2 560 000	2 560,0
4.3	Ձայնային համակարգ (live համերգի համար) /ըստ խմբերի ռայդերի/ EV ապրանքանիշի ձայնային համակարգ 8 հատ - XLC - 127 4 հատ - Xsub 6 հատ - TX1122FM(monitor) 1 հատ - yamaha digital mixing console LS9-32 4 հատ - Wierless mics 8 օր x 380 000 դրամ = 3 040 000 դրամ	հատ	1	3 040 000	3 040,0

4.4	Լույսեր, փաթեթ 8 օր 4 հատ - 19x15w led bee eye 6 հատ - 18pcs led wall washer 4 հատ - 200w led blinder light 12 հատ - 440w 20r beam/spot/wash 3in1 moving head light 12 հատ - 18pcs 4in1 led par light 1 հատ - 6x40w led moving head light 1 հատ Light console Avolites Titan Mobile or chamsys MQ60 8 օր x 435000 դրամ = 3480000 դրամ	հատ	1	3 480 000	3 480,0
4.5	Բեմ՝ (63 քմ՝ 9 մ լայնություն,7 մ խորություն, 0,8 մ բարձրություն)՝ 8 օր x 170 000 դրամ = 1 360 000 դրամ	հատ	1	1 360 000	1 360,0
4.6	Ֆերմաներ (10 մ x 8 մ x 6 մ x 2 մ)՝ 8 օր x 335000 դրամ = 2 680 000 դրամ	հատ	1	2 680 000	2 680,0
4.7	Աթոռների վարձակալություն՝ 8 օր x 263,14 դրամ x 350 հատ = 736 800 դրամ	հատ	1	736 800	736,8
	ԸՆԴԱՄԵՆԸ				16 666,7
	ԱԱՀ**				3 333,3
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ				20 000,0

* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

* *ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878 ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Երեխաների հատուկ ստեղծագործական
կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001678, ՀՎՀՀ 02514349
Հեռ. /056/ 991919
Տնօրեն
Մ. Կարապետյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«23» « 06» 2023
N ՄՇԴ-278-2023 պայմանագ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախս հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

<< ԿԳՄՍ նախարարության

պատասխանատու՝

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N
«23» «06» 20
N ՄՇԴ-278 -2023 պայման

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը NՔ. Երևան « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպոր նախարարության գլխավոր քարտուղար _____
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝
_____

Տնօրեն՝
_____

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝
_____